1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություն կատարելու մասին» N Մ-253-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00250089) 2013 թվականի ապրիլի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի Հավելված 1-ը կազմող աշխատանքի ծավալափաթեթ-նախահաշվին համապատասխան Երևանում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու մերձակայքում՝ «Ձորագյուղ» ազգագրական թաղամասում, կառուցել հենապատ և կատարել քանդման շխատանքներ՝ 58,851,760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


2) «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00250089) 2013 թվականի մայիսի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի Հավելված 1-ը կազմող աշխատանքի ծավալափաթեթ-նախահաշվին համապատասխան

Երևանում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու մերձակայքում՝ «Ձորագյուղ» ազգագրական թաղամասում, վերակառուցել և վերականգնել «Սուրբ Սարգիս եկեղեցուն կից մանկական գեղագիտական կենտրոնի» թիվ 1,4 և 5 մասնաշենքերը՝ 281,680,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Հայնախագիծ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2013 թվականի մարտի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից մանկական գեղագիտական կենտրոնի նախագծային աշխատանքների իրականացում 16,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2013 թվականի հունիսի 12-ի
N 15/15.8/8275-12 ելիցի

13 ապրիլի 2013թ.

No 15/15.8/8380-13


ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-426-Ա որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝

1) որոշման անվանումը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Երևան իմ սեր» հիմնադրամ).

2) որոշման 1-ին կետի 1-ին պարբերությունում «2013 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություն կատարելու մասին» N Մ-253-Ա որոշմամբ» բառերը փոխարինել «2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա որոշման խմբագրությամբ)» բառերով:



Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 427 -Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՈՒԿԱՔԵՐՂ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 24-ի N 3/3.8-1/7147-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 29-ի N ՎՄ/3-4/6182-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Գաջեգործ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405114) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 16/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գաջի մատակարարում՝ 2,133,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 428 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 16-ի N 3/3.8-1/6626-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 18-ի N ՎՄ/3-4/5701-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի.Օ.ԷՅ.ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2013 թվականի ապրիլի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 429 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ) N 1


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 24-ի N 3/3.8-1/7093-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 24-ի N ՎՄ/3-4/6099-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի.Օ.ԷՅ.ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2013 թվականի մայիսի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի մարզի Արգինա համայնքի համար խաղաիրապարակի պարագաների պատրաստում և տեղադրում՝ 888,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**7 հունիսի 2013 թվականի N Մ- 430 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 24-ի N 3/3.8-1/7152-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 24-ի N ՎՄ/3-4/6100-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» N Մ-120-Ա որոշմամբ (2012 թվականի մարտի 14-ի N Մ-161-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2013 թվականի մայիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտի անցկացում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**7 հունիսի 2013 թվականի N Մ- 431 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
29-Ի N Մ-195-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ»
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-1/15852-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 23-ի N ՎՄ/3-4/6036-13 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 29-ի «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ կարիքներով երեխաների համար աղետների ռիսկերի նվազեցում» N Մ-195-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գլալի նշանակություն՝


1) «Պոժտեխնիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013653) 2013 թվականի ապրիլի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում՝ 3,988,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գրիման» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230486) 2013 թվականի ապրիլի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձայնալուսային ազդարարման համակարգի մատակարարում և տեղադրում՝ 2,583,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արթուր Աբրահամյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 46421196) 2013 թվականի ապրիլի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների պատրաստում՝ 6,384,822 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՆԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 432 - Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի N Մ-308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/158228-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 21-ի N ՎՄ/3-4/5815-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» N Մ-308-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2013 թվականի մայիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի շրջանակներում մատուցել սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված ծառայությունները՝ 197,175 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 433 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
29-Ի N Մ-467-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 16-ի N 3/3.8-1/6681-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 21-ի N ՎՄ/3-4/5814-13 եզրակացությունները, որոշում է.


1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2012 թվականի հունիսի 29-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» N Մ-467-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2013 թվականի մայիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում մատուցել սոյն պայմանագրի 1.2-րդ կետում նշված ծառայությունները՝ 1060500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էդգար Փարթենրս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2013 թվականի մայիսի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում տպագրել «Ծրագրի քաղած դասերը և լավագույն փորձը»՝ 500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սոյն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 434 - Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի N Մ-307-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 մայիսի 18-ի N 3/3.8-1/158127-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 22-ի N ՎՄ/3-4/5923 -13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան Այգեստան 5-րդ փողոց, 15 տուն) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-307-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ակոռ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03811085) 2013 թվականի մայիսի 14-ին կնքված՝ CCF-1-CT/2/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 49,571,285 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 435 -Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-977-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 24-ի N 3/3.8-1/7154-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 24-ի N ՎՄ/3-4/6106-13 եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Կրթավճարներ» ծրագրի մասին» N Մ-977-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «88,330,000 դրամ արժողությամբ» բառերը փոխարինել «88,746,000 դրամ արժողությամբ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).

3) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական ծառայությունների մատուցում՝ 4,620,000 դրամի չափով» բառերը փոխարինել «2013 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 30-ը հաշվապահական ծառայությունների մատուցում՝ 1,540,000 դրամի չափով» բառերով:

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է

սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Փրայստրեթիհաուկուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 3,496,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից «20» մայիսի 2013թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2013 թ.իրականացվող Կրթավճարների Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել հանրապետության պետական և մասնավոր բարձրագույն հաստատություններում, քոլեջներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների զծով ուսուցանվող, սոցիալապես անապահով և անվճարունակ ուսանողներին՝ կրթավճար և կրթաթոշակ տրամադրելու միջոցով: Վերը նշված կրթական հաստատությունների ցանկը տրվում է սույն ծրագրին կից ցուցակում:
2.	Ծրագրի բարեկործանական որակման նպատակը	Ավելալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեկործող	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Անուշ Մաթևոսյան, Ժիրայր Նիշանյան, Հարություն Գուլամիրյան, Սարգարիտ Աճեմյան
4.	Ծրագիրը կատարողը	ԱՄՆի ՀՀ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ մարզեր և ք. Երևան: Բնագավառը՝ կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 88 746 000 ՀՀ դրամ: Տարեկան ուսման վարձը կազմում է 63 765 000 ՀՀ դրամ: Տարեկան կրթաթոշակը՝ 11 895 000 ՀՀ դրամ: Կազմակերպական ծախսեր՝ 13 086 000 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1. Վերոնշյալ բուհերի բակալավրիատում, մագիստրատուրայում և կլինիկական օրդինատուրայում սովորող 110 ուսանողներ: 2. Ծագումով Գեղարքունիքի մարզից 53 ուսանող, որ սովորում են Գավառի պետական համալսարանում և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում:

7/21/13


		3. ք. Երևանի, ք. Վանաձորի և ք. Գավառի մանկատների կողմից երաշխավորված, ուսումը շարունակելու ցանկություն հայտնած մանկատների 79 ներկա և նախկին սաներ: Ընդհանուրը՝ 242 ուսանողներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2013 – 31.12.2013
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Կրթավճարների տրամադրման մրցույթների մասին հայտարարությունների տարածում ԶԼՄ-ների միջոցով /թերթեր, ռադիո, հեռուստակայաններ/: (մայիս - հունիս 2013) 2. Մրցույթների մասին հայտարարությունների տարածում վերոնշյալ բուհերում՝ հայտարարությունները փակցնելու միջոցով: (ընդունող հանձնաժողովների 2013 թ. աշխատանքի մեկնարկին) 3. Փաստաթղթային փաթեթների անհրաժեշտ քանակի պատճենահանում, տարածում բուհերում, այլ կրթօջախներում: (մայիս-հուլիս 2013) 4. Դիմորդների կողմից լրացված փաթեթների հավաքում: (օգոստոս 2013) 5. Փաթեթների դիտարկում, նախնական ընտրություն: (օգոստոս 2013) 6. Բոլոր դիմորդների տնայցեր: (օգոստոս 2013) 7. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում մանկատներում: ՀՀ-ի կրթական ծրագրերի համակարգող խորհրդի նիստի աշխատանքների կազմակերպում՝ վերջնական ընտրություն կատարելու նպատակով: օգոստոս-սեպտեմբեր 2013 8. Հաղթողների ընտրություն: սեպտեմբեր 2013 9. Մրցույթների արդյունքների մասին տեղեկացում – հաղթողների ցուցակները փակցվում են ՀՀ-ում:(սեպտեմբեր 2013) 10. Կողմնորոշման հանդիպումներ մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողների հետ, պայմանագրերի ստորագրում:(ուս տարվա ընթացքում) 11. Կրթավճարների փոխանցում համապատասխան բուհեր /տարեկան երկու անգամ/: (յուրաքանչյուր կիսամյակի սկզբին) 12. Ամենամսյա կրթաթոշակների վճարում ուսանողներին: (յուրաքանչյուր ամիս) 13. Բուհերի հետ մշտական կապի պահպանում՝ ուսանողների ակադեմիական աջակցությանը հետևելու նպատակով: (ուս. տարվա ողջ ընթացքում) 14. Ամեն կիսամյակի ավարտից հետո ստուգման գրույկների պատճենների հավաքում և դիտարկում: (յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո) 15. Աջակցության արդյունքները ուսումնասիրելու նպատակով Կրթական ծրագրի համակարգող խորհրդի նիստերի գումարում:(յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո)



7/21/13


		<p>16. Ուսանողների մասնակցությամբ բարեգործական միջոցառումների կազմակերպում: (ուս տարվա ընթացքում)</p> <p>17. Ծրագրի բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ այլ միջոցառումների կազմակերպում կամ քայլերի ձեռնարկում: (ուս տարվա ընթացքում)</p> <p>Կրթավճարները տրամադրվում են մրցութային կարգով մասնակցության և ընտրության երկու հիմնական չափանիշների հիման վրա՝ դիմորդի ընտանիքի աղքատության ցուցանիշը և դիմորդի ակադեմիական առաջընթացը: Կրթավճարները տրամադրվում են բակալավրիատում կամ այլ կրթական հաստատությունում ուսումնառության ողջ ընթացքում: Ծրագրին մասնակցությունը կանցցվում է, եթե տարիների ընթացքում փոփոխվել է ընտանիքի սոցիալական վիճակը կամ ուսանողը թերաճում է ուսման մեջ և չի կատարում իր պարտավորությունները: Նման դեպքերում ոչ բավարար առաջադիմություն ունեցող ուսանողի փոխարեն ընտրվում է նորը՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից: Յուրաքանչյուր ամիս 7000-ական դրամ կրթաթոշակ է տրամադրվում ծրագրերում ընդգրկված մանկատան սան կամ շրջանավարտ ուսանողներին, Գավառի պետական համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում սովորող ուսանողներին՝ բարերարների ցանկությամբ: Գումարը նախատեսված է ուսումնական նյութերի պարճենահանման, զրեճական պիտույքների և դասագրքերի ձեռքբերման կամ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:</p> <p>Դիմորդների և ուսանողների ընտանիքների սոցիալական վիճակի մասին տեղեկությունները հավաքագրվում են համապատասխան հարցաթերթիկի միջոցով և այնուհետև ճշտվում նրանցից յուրաքանչյուր բնակարան այցելության ընթացքում: Մրցույթի արդյունքները ամփոփվում են կրթական ծրագրերի հանձնաժողովի նիստերի ընթացքում: Հանձնաժողովի անդամներ են ՀՕՖ աշխատակիցները, ծրագրերի համակարգողները, բարերարների ներկայացուցիչները և ՀՕՖ կրթական ծրագրերի շահառուները՝ կրթաթոշակառուները:</p> <p>Ծրագրի ընդհանուր արժեքն է 88 746 000 ՀՀ դրամ:</p>
10.	Ձեռք բերվող (ներմուծող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2013 - 31.12.2013 թվականի ընթացքում ԱՄՀ-ից ազատում 3 700 000 դրամի չափով՝ պայմանագիր 177/01/11/2012 կնքված 01.11.2012թ. «Յուբուս» ՍՊԸ-ի, (ք. Երևան, Տերյան 19, բն 4, ՀՎՀՀ 0024873) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց 01.01.2013 - 31.12.2013 թվականի ընթացքում ԱՄՀ-ից ազատում 1 600 000 դրամի չափով՝</p>

1/21/1

		<p>պայմանագիր 230174, կնքված 18.03.08թ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» Փ.Բ.Ը. Հարավ մասնաճյուղի (ք. Երևան, Արշակունյաց 17ա, ՀՎՀՀ 01520882) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք հաշվապահական ծառայությունների համար 01.01.2013 - 30.04.2013 թվականի ընթացքում ԱՄՀ-ից ազատում 1 540 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 16.04.2008թ. «Պարտզիզմա Արմենիա» ՓԲԸ-ի (ք. Երևան, Վրացական 7/24, ՀՎՀՀ 00079492) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p> <p>Ակնկալում ենք հաշվապահական ծառայությունների համար 01.05.2013 - 31.12.2013 թվականի ընթացքում ԱՄՀ-ից ազատում 3 496 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 29.04.2013թ. «ՓրայտուդթերիաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի (ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, թիվ 17, ՀՎՀՀ 02588296) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:</p>												
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	<p>Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 13 086 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 14.7%-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝</p> <table border="1"> <tr><td>ծրագրի ղեկավարի աշխատավարձ</td><td>1 800 000</td></tr> <tr><td>կապի ծառայություններ</td><td>3 700 000</td></tr> <tr><td>կոմունալ ծախսեր</td><td>1 600 000</td></tr> <tr><td>տրանսպորտային ծախսեր</td><td>700 000</td></tr> <tr><td>հաշվապահական ծառայություններ</td><td>5 036 000</td></tr> <tr><td>տպագրական ծախսեր</td><td>250 000</td></tr> </table>	ծրագրի ղեկավարի աշխատավարձ	1 800 000	կապի ծառայություններ	3 700 000	կոմունալ ծախսեր	1 600 000	տրանսպորտային ծախսեր	700 000	հաշվապահական ծառայություններ	5 036 000	տպագրական ծախսեր	250 000
ծրագրի ղեկավարի աշխատավարձ	1 800 000													
կապի ծառայություններ	3 700 000													
կոմունալ ծախսեր	1 600 000													
տրանսպորտային ծախսեր	700 000													
հաշվապահական ծառայություններ	5 036 000													
տպագրական ծախսեր	250 000													
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի 2. ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, 3. Բոլոր վերը նշված կրթաթոշակների 4. Մանկատների 5. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի 6. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի 7. Տեղական ինքնակառավարման մարմինների 8. Վերոնշյալ ոլորտում գործող այլ տեղական և արտասահմանյան ոչ կառավարական կառույցների 												

1/10/1

<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ծրագրի հովանավորների՝ ԱՆուշ Մաթևոսյանի, Ժիրայր Նիշանյանի, Սարգսիս Աճեմյանի, Գրիգորյան ընտանիքի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի կենտրոնի հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով:</p>
---	---



7/21.19



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 436 - Ա
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄ-
ԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրենի 2013 թվականի մայիսի 23-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «Ծրագրի սկիզբը՝ 2011թ. նոյեմբերի 15, ավարտը՝ 2012 թ. դեկտեմբերի 31, տևողությունը՝ 14 ամիս» բառերը փոխարինել «Ծրագրի սկիզբը՝ 2011 թ. նոյեմբերի 15, ավարտը՝ 2013 թ. դեկտեմբերի 30, տևողությունը՝ 26 ամիս» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ- 437 - Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
17-Ի N Մ-362-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության տնօրենի 2013 թվականի մայիսի 24-ի գրությունը, **ո թ ո - 2 ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-362-Ա որոշման 1-ին կետում «50.60 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «51 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 հունիսի 2013 թվականի N Մ - 438 - Ա
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ
ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ
ԿՈՆԵԿՏՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ»
ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 5-ի N 3/3.8-1/7745-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի 3-ի N 02/3105-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 4-ի N ՎՄ/3-4/6541-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 700,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կեղտաջրերի և կենտրոնական հիվանդանոցի կղեկտորների կառուցման հեղինակային հսկողություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«ԵՐՃԵՊՀ» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506385) 2013 թվականի ապրիլի 13-ին կնքված՝ N ԼՂ/ՀՀ-07/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կղեկտորների կառուցման հեղինակային հսկողություն՝ 700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«22» մայիսի 2013թ.


«ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կեղտաջրերի և կենտրոնական հիվանդանոցի կոլեկտորների կառուցման հեղինակային հսկողություն» ԾՐԱԳԻՐ (օժանդակ)

1.	Ծրագրի նպատակը	Օժանդակել ԼՂՀ Մարտունի քաղաքի և կենտրոնական հիվանդանոցի կենցաղային կոյուղու վերակառուցմանը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ԼՂՀ Մարտունի քաղաք, ջրամատակարարման բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 700.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	Մարտունի քաղաքի բնակիչները

T/A

7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ ապրիլի 15 -ից մինչև 2013թ. դեկտեմբերի 15-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ԵրՃՇԳՀ ՊՈԱԿ-ի կողմից ԼՂՀ Մարտունի քաղաքի կենցաղային կեղտաջրերի ԿԿ1-3, ԿԿ1-4, ԿԿ1-5, ԿԿ1-7 կոլեկտորների և Մարտունի քաղաքի կենտրոնական հիվանդանոցի կոլեկտորի կոլեկտորի կառուցման հեղինակային հսկողություն՝ 700.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամիսի հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



T/A



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի N Մ - 439 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԼԻԲ-
ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2013 թվականի հունիսի 5-ի N 3/3.8-1/7747-13, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի 31-ի N
02/3062-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 4-ի N ՎՄ/3-4/6545-13 ու Հայաստանի
Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունիսի 3-ի N 01/14.2/1622-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող՝ 6,250,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Մելիքյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծում» ծրագիրը
(կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման
նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝
ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01203702) 2013 թվականի մայիսի 7-ին կնքված
N ՀՀ/ՆՆ-02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 5,750,000 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի
պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող
ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի
շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված
ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո
մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



ՆԱԽԱԳՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Ց Ե

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«22» մայիսի 2013թ.


«ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կառուցել ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղի համայնքի համար համայնքային կենտրոն
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղ, սոցիալական բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 6.250.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղի համայնքը

Շ/Ա.Մ

7.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մայիսի 07-ից մինչև 2013թ.սեպտեմբերի 07-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ-ի կողմից կառուցման նախագծման աշխատանքներ՝ 5.750.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: Նախատեսվում է նաև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 500.500,00 դրամ մոտավոր արժեքով:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյանը



Շ/Ա.Մ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2013 թվականի ՈՄ - 440 - Ա

քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԵՆՑԱՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 5-ի N 3/3.8-1/7738-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի 31-ի N 02/3049-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հունիսի 1-ի N 04/07-1/5798-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 4-ի N ՎՄ/3-4/6546-13 ու Հայաստանի Հանրապետության Կոլտայքի մարզպետի 2013 թվականի հունիսի 1-ի N 01/13.1/2084-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,896,800 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2013 թվականի մայիսի 15-ին կնքված՝ N ՀՀ-4-08/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված գույքի վաճառք, տեղափոխում և դպրոցում տեղադրում՝ 2,896,800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Կոտայքի մարզպետին:



ՆԱԽԱԳԵՂ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Ս Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան



(Handwritten signature)

«24» մայիսի 2013թ.

**« ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում »
ԾՐԱԳԻՐ**


1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի թվով երեք դասարանները անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	(ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաք, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 2.896.800,00 դրամ:

ՍՊ 2/3

2

6.	Բարեգործություն ստացողը	Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մայիսի 15-ից մինչև 2013թ. օգոստոսի 15-ը
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի երեք դասարանների համար ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում է անհատույց հանձնում՝ 2.896.800,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգում հասնելաժողովի կողմից (եռամսյակային ել ամիսի հավետություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակցական Արմինա Դարբինյանը



ՍՊ 2/3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 հունիսի 2013 թվականի N Մ - 441 - Ա
քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԳ ՎԻՃԻ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԵՆՏՐԱԼՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԿԱՐԳՐՈՒՄ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԵՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ
ԱՆԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՏԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-1/7762-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունիսի 3-ի N 02/3106-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մայիսի 31-ի N ՖՔ/ԱՆՄ-4/3945-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մայիսի 31-ի N ԴԴ/22/6129-13, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի հունիսի 5-ի N ՍԿ/ԱՀ-2/2776-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունիսի 4-ի N ՎՄ/3-4/6548-13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունիսի 4-ի N 01/12.1/1652-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,822,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Կենցաղային սարքավորումների մատակարարում Արագածոտնի մարզի վեց համայնքների նախադպրոցական կրթական հաստատություններին, բուժհաստատություններին և անասնաբուժական կետերին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի

նշանակություն՝

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆՏՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02235463) 2013 թվականի մայիսի 14-ին կնքված N WVA/TAL ADP/DP-01/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենցաղային սարքավորումների ձեռքբերում՝ 1,822,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրահամ Սթրոնգ




20 մայիսի, 2013թ.

<<Կենցաղային սարքավորումների մատակարարում Արագածոտնի մարզի վեց համայնքների նախադպրոցական կրթական հաստատություններին, բուժհաստատություններին և անասնաբուժական կետերին>>


Ծ Ր Ա Գ Ի Բ

